

**3.2. ՀՀ առևտրային բանկերի գործունեությունը**

Ըստ ՀՀ Կենտրոնական բանկի տվյալների, 2001թ. հոկտեմբերի 1-ի դրությամբ գործող բանկերի (բանկային գործունեություն իրականացնելու արտոնություն ունեցող) քանակը 29 միավոր է, իսկ բանկերի մասնաճյուղերի ընդհանուր քանակը՝ 239:

**Առևտրային բանկերի վարկային ներդրումների դինամիկան**

(մլն. դրամ)

	2000թ. 1.10	2001թ.					
		1.01	1.04	1.07	1.08	1.09	1.10
<b>Վարկային ներդրումներ, ընդամենը<sup>1</sup></b>	94832	96972	92111	86121	84163	87561	89405
որից՝ տարադրամով	82828	82267	75669	70754	70209	73403	75042
<i>այդ թվում.</i>							
կարճաժամկետ	36166	39543	38264	35819	34034	38141	40074
<i>%-ով ընդամենը վարկային ներդրումների նկատմամբ</i>	38.1	40.7	41.5	41.6	40.4	43.6	44.8
որից տարադրամով	32771	34984	33026	31319	29687	33210	35072
<i>%-ով տարադրամով վարկերի նկատմամբ</i>	39.6	42.5	43.6	44.3	42.3	45.2	46.7
երկարաժամկետ	58666	57429	53848	50302	50129	49420	49331
<i>%-ով ընդամենը վարկային ներդրումների նկատմամբ</i>	61.9	59.2	58.5	58.4	59.6	56.4	55.2
որից՝ տարադրամով	50057	47283	42643	39435	40523	40193	39970
<i>%-ով տարադրամով վարկերի նկատմամբ</i>	60.4	57.5	56.4	55.7	57.7	54.8	53.3

2001թ. հոկտեմբերի 1-ի դրությամբ երկարաձգված և ժամկետանց վարկերը կազմել են համապատասխանաբար՝ 10178 մլն. և 13964 մլն. դրամ: Տարեսկզբի նկատմամբ երկարաձգված վարկերը նվազել են 152 մլն. դրամով կամ 1,5%-ով, իսկ ժամկետանց վարկերը համապատասխանաբար՝ 688 մլն. դրամով կամ 4,7%-ով:

Բանկերում բնակչությունից ներգրավված ավանդների մնացորդը տարեսկզբի նկատմամբ աճել է 6329 մլն. դրամով կամ 13,5%-ով և 2001թ. հոկտեմբերի 1-ի դրությամբ կազմել՝ 53063 մլն. դրամ:

Բանկային համակարգում սպասարկվող հաճախորդների քանակը 2001թ. սեպտեմբերի վերջի դրությամբ կազմել է 376103, որից ֆիզիկական անձինք՝ 316497, իսկ նրանց հաշիվների քանակը՝ համապատասխանաբար 395520 և 321000: Ընդ որում, ներառված չեն միացյալ հաշիվներում ընդգրկված հաճախորդները և նրանց հաշիվների քանակը:

2001թ. հունվար-սեպտեմբերին ՀՀ բանկային համակարգում դրամարկղային շրջանառության մուտքերը կազմել են 299940,2 մլն. դրամ (սեպտեմբերին՝ 33985,7 մլն. դրամ), իսկ ծախսերը՝ 294852,4 մլն. դրամ (սեպտեմբերին՝ 31879,1 մլն. դրամ): Մուտքերը գերազանցել են ծախսերի գումարը 5087,8 մլն. դրամով (սեպտեմբերին՝ 2106,6 մլն. դրամով):

<sup>1</sup> Ընդգրկված չեն երկարաձգված և ժամկետանց վարկերը:

### 3. ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՏՎԱԾ

Արտարժույթի վաճառքից մուտքերը 2001թ. հունվար-սեպտեմբերին կազմել են 77473,2 մլն. դրամ (սեպտեմբերին՝ 8488,9 մլն. դրամ), իսկ արտարժույթ գնելու համար ծախսերը՝ 76431,3 մլն. դրամ (սեպտեմբերին՝ 10508,0 մլն. դրամ): Արտարժույթի վաճառքից մուտքերը գերազանցել են արտարժույթ գնելու համար ծախսերի գումարը 1041,9 մլն. դրամով, իսկ սեպտեմբերին արտարժույթ գնելու համար ծախսերի գումարը գերազանցել է արտարժույթի վաճառքից մուտքերի գումարը 2019,1 մլն. դրամով: